այսօր այնտեղ կազմուել է մի սերունդ, որ միանդամայն անծանօթ է ազատութեան զգացմունքին եւ խստաւ անհաղորդ նրա յարուցած անխառն ու հմայիչ բերկրանքին: Բանական, իմացական մարդկանց բազմութիւնը դարձել է կորաքամակ անխօս մի նախիր, որ շարժւում ու ապրում է, վաստակում ու դադար է առնում վերից եկած հրամանով:

Աւելի զարհուրելին այն է, որ այն դըժոխքից եկողները յաճախ անզօր են նոյնիսկ այս կացութեան բոլոր սարսափն զգալու. մարդիկ կորցրել են մտածելու եւ տանջուելու գիտակցութիւնը: Հասարակական խղճմտանքի ընդարմացումն է այս:

Կարդացի՞ք «Դրօշակ»ի հոկտեմբերի համարում «Կարմիր բուունցքի տակ» թղթակցութիւնը Հայաստանից, ուղղուած տարագիրներին. ահա թէ ի՞նչ է ասում դժբախտ թղթակիցը.

«Եթէ ապրում էք ծայրայեղ չքաւորութեան եւ սուր կարիքի մէջ, կիսաքաղց ու բոկոտն, եթէ մի կտոր հացի անիծեալ հոգսը արճիճի պէս ճնշում է ձեր ուղեղը եւ հնամաշ ցեցոտինները ծածկում են ձեր մերկութիւնը — դարձեալ երանի ձեզ:

«Երանի՛ ձեզ, որովհետեւ դուք հեռուից միայն դիտէք, ի՞նչ է նշանակում բոլշեւիկեան իշխանութիւն:

«Երանի՛ ձեզ, որովհետեւ չէք զգում զըռեհիկ ու ամբարտաւան իշխանաւորների տիրապետութեան ծանրութիւնը, ուր ապիտութիւնը ղեկավարող է, դաժանութիւնը՝ մրցութեան առարկայ, խարէութիւնը՝ սրբագործուած միջոց:

«Որովհետեւ չէք տեսնում բարքերի այլասերումը, ուր ընտանիքն այլանդակուած է, ծնողները՝ կաւատ, մանուկները՝ պոռնիկ:

«Երանի՛ ձեզ, որովհետեւ ձեր շուրջը չեն վխտում վարձու եւ անվարձ լրտեսների անհամար վոհմակներ, ուր սպառնալիքը մըշտընչենական է, սարսափը՝ չշմեցուցիչ, կործանումը՝ մագից կախուած:

«Կաթիլ-կաթիլ քամեցին մեզնից ինչ որ դեռ եւս սուրբ էր մնացել մեր մէջ, ինչ որ մարդկային էր. անզգայ դիակներ դարձրին մեզ, անլեզու անասուններ ... խորտակեցին մեր կամքը, եւ մարդ մեքենաների վերածեցին մեզ: Ուրանում ենք երկկուան գաղափարներն ու սրբութիւնները, երբ հարկադրում են, հայհոյում ենք, երբ հրամայում են, մատնում ենք, երբ սպառնում են...

«Իսկ դուք, դուք երջանիկ էք, ձեր կեանքն ազատ է, հոգին՝ անկաշկանդ եւ խիղճը մաքուր:

«Երանի՛ ձեզ»:

Այսպիսի սարսռեցուցիչ նկարագրութիւններ մենք սովոր էինք կարդալ մեր ուսանող տարիներին մեր հին-հին ժամանակագիրների ողբերի մէջ ասիական բարբարոսութեան տերութիւնների շրջաններից: «Զար եւ անիրաւ ժամանակի հանդիպեցաք». կամ «բազում ողբոց արժանի ժամանակի հանդիպեցաք» վերջացնում էին իրենց եղերական պատմութիւնները մեր դժբախտ նախահայրերը:

Դարեր են անցել այդ ժամանակներից, եւ մենք ապրում ենք յար եւ նման նոյն սեւ օրերը, եթէ ոչ աւելի վատթար:

«Ծնողները՝ կաւատ, մանուկները՝ պոռնիկ»...

«Հայհոյում ենք, երբ հրամայում են, մատնում ենք, երբ սպառնում են»...

Մարդ շնչարգելում է այս տողերը կարդալիս. հոգիների ջարդ է այս, եւ ոչ միայն մարմինների: Եւ այսպէս համայն Ռուսիայում:

Արդ՝ ի՞նչպէս է դիմանում այսպիսի բեռիմը:

Ի՞նչպէս է որ տակում է 150 միլիոն ժողովուրդը:

Ո՞ւր է բացատրութիւնն այս դժնդակ առեղծուածի:

* * *

Այս ապշեցուցիչ առեղծուածի լուծումը լատ իս փնտռելու է երկու ճամբով — արտաքին եւ ներքին, հոգեբանական:

Արտաքին պատճառների մէջ առաջին հերթին յիշատակելու է արտասահմանեան ընկերվարութեան, կամ այլ խօսքով Բ. Ինտերնացիոնալի ընձեռած անուղղակի ահագին աջակցութիւնը բոլշեւիզմին եւ համայնավարութեան: Այն երկիւղը, թէ բոլշեւիզմի կործանումով Ռուսիայում պիտի իշխի, դուցէ